

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՅ-ԿԱԿԱՆ ԵՎ ԼԵՀԱԿԱՆ ՓՈՐՁԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐ-ԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Մ. Գրիգման

Երեխաների վերականգնողական թերապիայի անկախ հասարակական կենտրոնի ղեկավար, նյարդալոգոպեդ, Հումանիտար գիտությունների դոկտոր, Կվիժին, Լեհաստան

Ա. Վ. Ավագյան

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պեդագոգական մանկավարժական համալսարանի հափուկ կրթության ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հանգուցային բառեր և արտահայտություններ. այլընտրանքային զարգացնող հաղորդակցում (AAC), հաղորդակցման դժվարություններ ունեցող անձ, <<խոսող>> սարքեր, համեմատական վերլուծություն, ավանդական մեթոդներ, ռուսալեզու գրականություն

Վերջին տասնամյակում հաղորդակցման դժվարություններ ունեցող անձանց հետ աշխատանքում լայն կիրառում են ստացել հաղորդակցման զարգացման այլընտրանքային մեթոդները:

Այլընտրանքային լրացուցիչ հաղորդակցումը ժամանակակից միջազգային գրականության մեջ նշվում է AAC հապավմամբ (Augmentative and Alternative Communication). Այն իրենից ներկայացնում է մի կողմից խոսքի զարգացման հապաղմամբ երեխաների համար հաղորդակցման միջոց՝ քանի դեռ չի ձևավորվել բանավոր խոսքը, մյուս կողմից հաղորդակցմանը օգնող, լրացուցիչ մի-

ջոց՝ խոսքի խանգարումներով անձանց համար:

Հազվադեպ հանդիպում են խոսքի ծանր խանգարումներ (անարտրիա, աֆազիայի ծանր դեպքեր, ալալիա), երբ հաղորդակցման միակ հնարավոր եղանակը այլընտրանքայինն է: Այդ դեպքերում AAC-ն հանդիսանում է հաղորդակցվելու, ցանկությունները, զգացմունքները, հույզերը, հետաքրքրությունները արտահայտելու այն միջոցը, որը մարդուն ուղեկցում է ողջ կյանքի ընթացքում (Avagyan A., 2013):

Այլընտրանքային հաղորդակցումը երկու դեպքերում էլ նպաստում է շրջապատողների հետ փոխհարաբերությունների զարգացմանը (Calculator S., Dollaghan C., 1982).

Հայաստանում և Լեհաստանում AAC-ի կիրառումն համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ այս ոլորտում կան որոշակի տարբերություններ, մասնավորապես.

Լեհաստանում AAC-ն լայնորեն կի-

րառվում է 1980-ականների վերջից: Հայաստանում այլընտրանքային հաղորդակցման մեթոդներն օգտագործվում են վերջին տասնամյակում և լայն տարածում դեռ չունեն:

Լոգոպեդական աշխատանքի ընթացքում, այլընտրանքային հաղորդակցման մեթոդներից, Հայաստանում առավել հաճախ կիրառվում է նկարների կամ խորհրդանիշների փոխանակմամբ հաղորդակցման համակարգերը: Լեհաստանում վերոնշյալ մեթոդների կողքին, լայնորեն կիրառվում են նաև համակարգչի ու <<խոսող>> սարքերի միջոցով հաղորդակցումը (Grycman M., 2011):

Հայաստանում հաղորդակցման այլընտրանքային միջոցները հիմնականում կիրառվում են աուտիզմ ախտորոշում ունեցող երեխաների հետ աշխատանքում: Լեհաստանում դրանք լայն կիրառում ունեն հաղորդակցման ցանկացած դժվարության դեպքում (աֆազիա, անարտրիա, ալալիա):

Հայաստանում, առավել հաճախ, լոգոպեդական աշխատանքի առաջնային նպատակը խոսքի ձևավորումն է, երկրորդային նպատակը՝ հաղորդակցման զարգացումը: Լեհաստանում, որպես կանոն, մասնագետների առաջնային նպատակը այցելուի հաղորդակցման զարգացումն է, իսկ երկրորդայինը, և նույնքան կարևորը, խոսք ձևավորելը:

Հայաստանում մասնագետները, որպես կանոն, աշխատում են ավանդական մեթոդներով և երկար ժամանակ են հատկացնում երեխաների էքսպրեսիվ խոսքի ձևավորմանն ու իմպրեսիվ խոսքի զարգացմանը: Արդյունքում բավականին զարգա-

նում է երեխայի իմպրեսիվ խոսքը. երեխան հասկանում է հրահանգները, մատնանշում է իրենից հարցվող ցանկացած առարկա, պատկեր, բայց բանավոր խոսքը սահմանափակվում է մի քանի բառերով ու ծայնարձակումներով, որոնք չափազանց քիչ են լիարժեք հաղորդակցման համար:

Լեհաստանում, հաղորդակցման դժվարությունների դեպքում մասնագետների կողմից իրականացվում է այլընտրանքային հաղորդակցման զարգացումը, առանց ժամանակ վատնելու ծայնարձակումներ ու խոսք ձևավորելու վրա: Փորձը ցույց է տալիս, որ հաղորդակցման զարգացման դեպքում երեխայի մոտ ավելի մեծ է լինում խոսելու ցանկությունը, պահանջմունքը և խոսքը ձևավորվում է ինքնաբերական կերպով:

Հայաստանում, մասնագետների կողմից հաղորդակցման զարգացման ժամանակակից տեխնոլոգիաների ոչ բավարար օգտագործումը պայմանավորված է.

1. մեթոդներին չտիրապետելով:
2. լոգոպեդական աշխատանքում խորհրդային և ռուսալեզու գրականության վրա հենվելով:
3. մասնագիտական վերապատրաստումների և լիցենզավորման անհրաժեշտության բացակայությամբ:
5. այլընտրանքային հաղորդակցման համար անհրաժեշտ պարագաների (օրինակ՝ հաղորդակցման գիրք) պատրաստման ժամանակատարությամբ:
6. ծնողների այն մտավախությամբ, որ այլընտրանքային ձևով հաղորդակցվելու դեպքում երեխան չի

խոսի, որովհետև չի ունենա դրա կա-
րիքը(Ավագյան Ա., 2012):

Վերհանված խնդիրները լուծե-
լու նպատակով մեր կողմից իրակա-
նացվում է իրազեկող աշխատանք
ծնողների հետ, նախատեսվում են
վերապատրաստման դասընթաց-
ներ մասնագետների համար: Որպես
առաջին քայլ, մասնագետներին ու-
զում ենք ներկայացնել հաղորդակց-
ման կարողությունների հետազոտ-
ման մեր կողմից թարգմանված և
ադապտացված քարտը:

Հաղորդակցման դժվարություն-
ներով անձանց հետազոտման ըն-
թացքում լոգոպեդը պարզում է այ-
ցելուի խոսքի խանգարման տեսակը
և իրականացնում է հաղորդակցա-
կան կարողությունների գնահատու-
մը: Մասնավորապես.

- տվյալ անձի կողմից օգտագործ-
վող հաղորդակցման միջոցները,

- փոխհարաբերություններ ստեղ-
ծելու կարողությունը, հաղորդա-
կցման գործընթացը,

- հաղորդակցական կարողություն-
ների բարելավման ու շտկման
համար AAC համակարգի կիրառ-
ման նպատակահարմարությունը:

Հաղորդակցական կարողություն-
ների գնահատման գործընթացը
իրականացվում է բնական պայման-
ներում և գործունեության ընթաց-
քում, ինչը համեմատաբար դժվար է
իրագործել մեծահասակ այցելույնե-
րին դեպքում, քանի որ նրանց հա-
ղորդակցական բնական պայմաննե-
րը բավականին սահմանափակ են
(Elder, Goosens 1994; Buzolich, Wie-
mann 1988; Glennen 1998):

Հետազոտության տվյալները
լրացվում են ներքոնշյալ հետազոտ-
ման քարտում և վերլուծվում մասնա-
գետի կողմից:

Հաղորդակցման կարողությունների հետազոտման քարտ						
Լրացման ձևը: Լրացնել աղյուսակի դատարկ սյունակները: Հետազոտությունը անցկացնել 30 րոպե տևող գործունեության/խաղի ըն- թացքում: Աղյուսակի համապատասխան սյունակում կատարել համապա- տասխան նշում:						
Հաղորդակցման միջոցներ						
Հաղորդակցվե- լու անհրաժեշ- տությունը	Բառերով կամ ձայ- նարձա- կումնե- րով	Հայաց- քով	Ժեստե- րով կամ դիմա- խաղով	խորհրդա- նիշները/ նկարները մատնա- ցույց անե- լով	դիդակտիկ սյուրներով կամ ժամանակա- կից տեխն- ոլոգիաներով	Այլ
Ինչպե՞ս է խնդ- րում որևէ առարկա:						

Ինչպե՞ս է հար- ցեր տալիս:						
Ինչպե՞ս է պա- տասխանում հարցերին:						
Ինչպե՞ս է դի- մում, իր վրա ուշադրություն հրավիրում:						
Ինչպե՞ս է մեկ- նաբանություն- ներ անում:						
Ինչպե՞ս է ար- տահայտում հույզերը, առար- կությունը:						

Աղբյուր՝ S. L. Glennen, D. C. De-Coste 1998, s. 165 (թարգմանությունը և հարմարեցումը Մ. Գրիգմանի, Ա.Ավագյանի):

Հետազոտական քարտով այցե-
լուի հաղորդակցման կարողության
և հաղորդակցական հնարավորու-
թյունների գնահատուման արդյուն-
քում մասնագետը կարող է յուրա-
քանչյուր կոնկրետ դեպքում ընտրել
հաղորդակցման զարգացման այլը-
նտրանքային կոնկրետ միջոց. ժես-
տեր, նկարների փոխանակում (PEC-

S-Picture Exchange Communication
System), սիմվոլներ, տեխնիկական
միջոցներ, <<խոսող>> սարքերը և
այլն:

Ստացված տվյալների վերլու-
ծությունը լոգոպեդին թույլ է տալիս
որոշել և պլանավորել միջամտու-
թյան հաջորդական քայլերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավագյան Ա. Նկարների միջոցով հաղորդակցման համակարգ. հաճախ տրվող հարցեր, Մանկավարժական միություն, -2012, N3-4, էջ 153-158
2. Avagyan A. The usge of Alternative Communication with Autistic Children: Armenian Experience, World Psychiatric Association Thematic Conference "Mental Helth and Mental Illness: Focusing on Eurasia", Yerevan, 2013, S35
3. Buzolich M., Wiemann J. Turntaking in Atypical Conversations: The Case of the Speaker/Augmentated Communicator Dyad, „Journal of Speech and Hearing Research", 1988, No. 31, s.3-18.
4. Calculator S., Dollaghan C. *The Use of Communication Boards in a Residential Setting: An Evaluation*, „Journal of Speech and Hearing Disorders", 1982, No. 47, s. 281-287.
5. Calculator S., Luchko C., Evaluating the Effectiveness of a Communication Board Training Program, „Journal of Speech and Hearing Disorders", 1983 No. 48, s.185-199.
6. Elder P., Goosens C. Engineering Training Environments for Interactive Augmentative Communication, Southeast Augmentative Communication Conference Publications Clinician Series, Birmingham, 1994.
7. Glennen S.L. Augmentative and Alternative Communication in: G. Church, S.L. Glennen, *The Handbook of Assistive Technology*, Singular Publishing Group, San Diego, 1992.
8. Grycman M., Program wspomagania kompetencji komunikacyjnej dzieci z ciężkimi zaburzeniami porozumiewania się – Ciągi czynności, gry i zabawy, Jedzenie, Emocje Toruń, 2011

РЕЗЮМЕ

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ АРМЯНСКОГО И ПОЛЬСКОГО ОПЫТА ИСПОЛЬЗОВАНИЯ АЛЬТЕРНАТИВНОЙ КОММУНИКАЦИИ

М. Грицман

Председатель независимого общественного центра лечения и реабилитации детей, нейрологопед, доктор гуманитарных наук Квидзын, Польша

А. В. Авакян

*Декан факультета специального образования Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна
кандидат педагогических наук, доцент*

В статье представлена совместно разработанная и адаптированная карта обследования навыков коммуникации у людей с нарушением речи, проведен сравнительный анализ логопедической работы методами AAC в Армении и в Польше.

По мнению авторов в Армении ме-

нее распространено использование альтернативных технологий развития коммуникации. В статье перечислены предполагаемые причины недостаточной распространенности использования новейших технологий, а также представлены рекомендации для их более широкого применения.

SUMMARY

COMPARATIVE ANALYSIS OF ARMENIAN AND POLISH EXPERIENCE OF ALTERNATIVE COMMUNICATION APPLICATION

M. Grycman

Head of the Independent Public center of child treatment and rehabilitation, Neuropsychiatrist, Doctor of humanitarian sciences Kwidzyn, Poland

A.V. Avagyan

*Dean of the Faculty of Special Education Khachatur Abovyan
Armenian State Pedagogical University, Candidate of Pedagogical Sciences,
Associate professor*

Jointly developed and adapted card for studying communication skills of people with speech disorders is introduced in the article, comparative analysis of speech therapy with the application of AAC methods in Armenia and Poland was carried out.

According to the authors, the ap-

plication of alternative technologies of communication development is less common in Armenia. The supposed causes of this phenomenon are mentioned in the article, and recommendations are introduced for the extension of up-to-date technologies.